

**ԱՐԴԻ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՎՈՐՄԱՆ և ԳՈՐԾԱՌՆՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արամ ՎԱՐՏԻԿՅԱՆ

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, սոց. գիտ. թեկնածու

Բանալի բառեր. միջազգային միգրացիա, անդրազգային տարածություններ,
անդրազգային ցանցեր, անդր-միգրանտ

Տեղաշարժը մի բնակավայրից մյուսը ուղեկցել է մարդուն իր պատմության ողջ ընթացքում: Քաղաքակրթությունների ձևավորումը, զարգացումը և անկումը մեկնաբանող հայեցագարգերի շարքում հստակորեն առաջնանում են այդպիսիք, որոնք որպես մեկնաբանական տարր ընտրել են միգրացիան: Երևի թե չկա որևէ պատմական շրջան, քաղաքակրթություն, պետություն, որն անմասն է մնացել միգրացիայից: Այս իմաստով առավել նշանակալի է 20-րդ դարը, որը հենց սկզբից համեմված է եղել միգրացիոն հոսքերով: Դրա ընթացքում իրար փոխարինող բռնի տեղահանությունները, առևտրա-տնտեսական, աշխատանքային, բնապահպանական և այլ միգրացիոն հոսքերը յուրովի ձևավորել են պետությունների, տարածաշրջանների կենսական ընթացքը, սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային վերարտադրումը: Միգրացիոն շրջապտույտներն իրենց ինտենսիվությամբ, քանակական, որակական դրսևորումներով զագաթնակետին հասան 20-րդ դարի վերջին քառորդում և 21-րդ դարասկզբին¹: Իրավիճակի ձևավորմանը նպաստեցին խորացող գլոբալ և լոկալ անորոշությունը, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական, քաղաքական կենսագործունեության ասսիմետրիկ զարգացումը, առանձին երկրների համար անցանկալի ընթացքը, քաղաքական համակարգերի անկումն ու չտեսնված վերափոխումները, կապիտալի վերարտադրման և կուտակման էքստենսիվ ձևերը, աշխատանքի և ռեսուրսների նոր վերաբաշխումը²: Փոփոխություններն ու զարգացումները այլևս սահմանափակված և տեղայնացված չեն: Դրանք տեղի ունենալով ուժգին փոխկապակցվածությամբ աչքի ընկնող գլոբալ աշխարհում իրենց արագացող, հաճախ բացասական, անկանխատեսելի ազդեցությունն ունեն աշխարհի հեռավոր անկյուններում գտնվող հասարակությունների, պետությունների վրա: Հանդես գալով որպես գլոբալ և լոկալ փոփոխությունների արդյունք՝ միգրացիան իր հերթին, հաճախ օտարվելով ձևավո-

¹ S. Castles, M. J. Miller, The Age of Migration, Palgrave Macmillan, 2009.

² A. Solimano, International Migration in the Age of Globalization, Cambridge University Press, 2010.

րող նախապայմաններից, հիմք է մեծ թվով գործընթացների, հասարակական կյանքի անկանխատեսելի, վտանգավոր, լարվածություն և անորոշություն առաջացնող մետամորֆոզների: Արդյունքում ունենք գլոբալ սոցիալական խառնարան, որի անդամն են նույնսկ աշխարհի հեռավոր անկյունների բնակիչները և ուր համաշխարհային միգրացիան թե քանակապես և թե որակապես գնալով ընդարձակվում է՝ իր ոլորապտույտի մեջ ներառելով նոր տարածաշրջաններ, սոցիալական նոր ձևեր և նոր մարտահրավերներ: Իսկապես, 20-րդ դարի վերջին քառորդում և առավելապես հիմա բազմաթիվ հասարակագետներ ուշադրություն են դարձնում այն հանգամանքին, որ այսօր աշխարհն փոխկապակցված է ավելի քան երբևէ³: Առաջին հերթին ակնհայտ է ինֆորմացիոն հոսանքների փոխներթափանցումը: Այսօր դժվար է պատկերացնել որևէ մի անկյուն, որին հասանելի չլինեն արևմտյան ինֆորմացիոն արտադրության արդյունքները, և որ ամենահետաքրքիրն է, տեղի ունի նաև հակառակը⁴: Ավելին, կապիտալի կուտակման նոր ռեժիմների, տնտեսավարման ապատարածականացված նոր ձևերի առաջացման արդյունքում այլևս հնարավոր չէ ունենալ ինքնաբավ, տեղայնացված տնտեսություն առանց զգալու հեռավոր պետություններում, տարածաշրջաններում տեղի ունեցող ընթացքների ազդեցությունները⁵: Ժամանակակից պետությունները և առանձին քաղաքացիները գտնվում են գործընթացների մի խառնարանում, գլոբալ և լոկալ անկայուն գործընթացների փոխադարձ բախման կիզակետում⁶:

Այսօրինակ փոխկապակցվածության մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ անդրազգայնություն հասկացությանը⁷: Դեռևս 1960-ական, առավելապես 70-ական թվականներին եզրույթն օգտագործվում էր նկարագրելու համար նոր տնտեսավարող սուբյեկտների կազմավորման, գործառնման առանձնահատկությունները, ինչը ենթադրում էր միաժամանակյա ձեռնարկատիրական անդամակցում ավելի քան մեկ պետությանը: Խոսքը գնում է այսպես կոչված անդրազգային ձեռնարկությունների մասին, որոնք մարմնավորում են արդի, զարգացած կապիտալիզմի առավել ճկուն, գլխավորապես հորիզոնական կապեր ենթադրող առաջընթացը: Ներկայումս խոսքը գնում է հասարակական այնօրինակ գործունեությունների, հարաբերությունների, մշակութային պրակտիկա-

³ S. Vertovec, Transnationalism, Routledge, 2009.; T. Faist, M. Fauser, E. Reisenauer, Transnational migration, Wiley, 2013.

⁴ F. Webster, Theories of the Information Society, Routledge, 2006.

⁵ G. Ritzer, Globalization, The Essentials, Wiley, 2011.

⁶ А. Мкртчян, Хаос как системообразующий механизм самоорганизации социума, ЕГУ, Ереван 2008, стр. 94.

⁷ N. Al-Ali, K. Koser, New approaches to Migration, Routledge, 2002.

ների և ձևերի, վերջիններիս վերարտադրման մասին, ինչը ենթադրում է սոցիալական սուբյեկտի միաժամանակյա գոյություն մեկից ավել երկրներում⁸: Առաջ է գալիս անդրազգայնության յուրահատուկ արգասիքը՝ անդրազգային միգրացիան: Ժամանակակից միջազգային միգրացիան իր ողջ բազմազանությամբ այլևս հնարավոր չէ պատկերացնել առանց հաշվի առնելու վերջինիս ազդեցությունն ու նշանակությունը միաժամանակ և առաքող և ընդունող հասարակությունների համար⁹: Միգրանտին արտասահմանում և ոչ-միգրանտին հայրենիքում կապող սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային կապերն այն աստիճան են խորացել, տարածվել, ներթափանցել բազմաթիվ սոցիալական սուբյեկտների գործունեություն, որ հիմնովին փոխել են անհատների առօրեական կենսագործունեությունը, ընտանիքների, համայնքների վերարտադրումը, ավանդույթները, սպասումները, վերաբերմունքներն ու դրվածքները¹⁰:

Ժամանակակից հասարակագետը ականատեսն է հասարակական կյանքի ըստ էության չտեսնված փոփոխությունների և ընթացքների, որոնցում անխոս նախկին, առավել պարփակված սահմանների թափանցիկության ավելացումը բնութագրվում է, աներևույթ սահմանների ձևավորումը առավել քան ակնհայտ է: Այսպես, Ա. Ապարդուրայը պնդում է, որ ժամանակակից գլոբալիզացիոն պայմաններում սոցիալական խմբերն այլևս ապատարածականացված են, պարփակված չեն տարածական սահմաններով և խիստ անհամասեռ են¹¹: Խմբային, համայնքային ինքնության ձևավորման խնդրում հստակ սահմանազատված տարածքները, որոնք կարծես ավանականորեն ինքնության կարևորագույն կառուցվածքային բաղադրիչ էին, այլևս առաջնահերթ չեն: Ժամանակակից մարդը նախընտրում է ինքնության առավել ճկուն, շարժունակ բաղադրիչներ, որոնք կարելի է տեղափոխել նոր աշխարհագրական վայր: Անընդհատ ծավալվող միջազգային միգրացիայի շնորհիվ ժամանակի ընթացքում ձևավորված այսօրինակ անդրսահմանային սոցիալական ցանցերը ձեռք են բերում ինքնուրույնություն, ձևայնացում: Դրանք վերափոխվում են ինքնավերարտադրվող անդրսահմանային սոցիալական դաշտերի կամ տարածությունների, որոնք պարփակում են ընդունող և առաքող հասարակությունները մեկ անդրսահմանային սոցիալական ընդհանրության

⁸ N. Glick. Schiller, From Immigrant to Transmigrant: Theorizing Transnational Migration, *Anthropological Quarterly*, 1995, Volume 68, Issue 1, pp. 49.

⁹ P. Levitt, *Transnational Migration: Taking Stock and Future Directions*, *Global Networks*, 2001, Volume 1, Issue 3, pp. 196-204

¹⁰ L.G. Basch, N. Glick Schiller, C. Blanc-Szanton, *Nations Unbound: Transnational Projects, Postcolonial Predicaments, and Deterritorialized Nation States*, New-York, 1994.

¹¹ A. Appadurai, *Global Ethnospaces: Notes and queries for a Transnational Anthropology*, *Recapturing Anthropology*, ed. R. Fox, Santa Fe, School of American Reserche Press, 1991.

մեջ¹²: Այստեղ ներառված առաջնային սոցիալական սուբյեկտը այսպես կոչված անդր-միգրանտն է, որի առօրեականությունը, կարճաժամկետ և ինչու չէ նաև երկարաժամկետ ապագան պայմանավորված է բազմաթիվ կայուն անդրազգային կապերով և որի ինքնությունը ձևավորվում է մեկից ավել երկրների սոցիալական տարածությունների, արժեքային համակարգերի համադրմամբ¹³: Նա ներառում և վերարտադրում է սոցիալական սպասումներ, մշակութային արժեքներ և նորմեր, մարդկային հարաբերությունների ձևեր, որոնք առաջանում են աշխարհագրորեն տարանջատված մեկից ավել սոցիալական, քաղաքական, տնտեսական համակարգերի վերադրումից¹⁴: Հատկանշական է, որ միայն այս ակտիվ անդր-միգրանտը չէ, որ անդամն է անդրազգային սոցիալական տարածության և վերարտադրում է համապատասխան սոցիալական պրակտիկաներ: Ակնհայտ է, որ հայրենիքում մնացած ոչ-միգրանտները, միգրանտի ընտանիքի անդամները, որոնց կենսագործունեությունը պայմանավորված է և կապված է դրսի հարազատի միգրացիոն ակտիվությունից նույնպես անդամակցում են անդրազգային սոցիալական տարածությանը: Նույնը կարելի է ասել արտասահմանաբնակների մասին, որոնք երկար ժամանակ չեն այցելել հայրենիք, բայց այս կամ այն ձևով պահպանում են պարբերական կապերը, շարունակում են փոխազդեցությունները հայրենիքի հետ: Այսպիսով, փաստացի տեղաշարժը պարտադիր պայման չէ անդրազգային միգրացիայի համար: Ակնհայտ է դառնում անդրազգային միգրացիոն գործընթացների և պրակտիկաների բազմաբարդությունը, ինչը առաջ է բերում վերջինիս բազմաչափ տիպականացման անհրաժեշտություն: Այսպես, Լ. Գարնիզոն տարանջատում է "Յիմնական" անդրազգայնություն, որին համապատասխան միգրացիան միգրանտի սովորական կյանքի անբաժան մասն է, տեղի ունի հստակ պարբերականությամբ, անընդհատությամբ: Մինևույն ժամանակ առաջ է բերում "ընդարձակ" անդրազգայնություն, ուր միգրանտը հստակ պարբերական, շարունակական ներառվածություն չունի, գործում է պատահական, հանգամանքների բերումով¹⁵: Անդրազգային միգրացիոն գործընթացների այլ չափայնությունը մասշտաբայնություն է: Այսպես, ոմանք կարող են ներառված լինել անդրազգային կրոնական ակտիվությունների մեջ, մինչդեռ որևէ կերպ մաս-

¹² P. Levitt, Transnational Migration: Taking Stock and Future Directions, Global Networks, 2001, Volume 1, Issue 3, pp. 196-204

¹³ L.G. Basch, N. Glick Schiller, C. Blanc-Szanton, Nations Unbound: Transnational Projects, Postcolonial Predicaments, and Deterritorialized Nation States, New-York, 1994.

¹⁴ P. Levitt, Transnational Migration: Taking Stock and Future Directions, Global Networks, 2001, Volume 1, Issue 3, pp. 196-204

¹⁵ L. E. Guarnizo, Notes on Transnationalism, Paper for Conference: Transnational migration: Comparative theory and Research Perspective, Oxford, UK, 2000.

նակցություն չունենալ տնտեսական կամ քաղաքական կյանքին, միջոցառումներին, մյուսները ներառված են բոլոր տեսակի անդրազգային ակտիվություններում՝ դրամական փոխանցումներից հայրենիքում մնացած հարազատներին մինչև լիարժեք մասնակցություն հայրենական քաղաքական կյանքին: Առաջին դեպքում մենք գործ ունենք "ընտրողական", իսկ երկրորդում "ընդհանրական" անդրազգային ակտիվության հետ¹⁶: Իր հերթին հարց է առաջանում՝ անդրազգային պրակտիկաները և ակտիվությունները, արդյունք են ժամանակակից միջազգային միգրացիայի թե այլ, առավել խորքային և ծավալուն գլոբալ գործընթացների: Այսպես, ըստ մի շարք հետազոտողների անդրազգայնությունը և համապատասխանաբար անդրազգային միգրացիան հանդես են գալիս որպես ներկայիս "զարգացած" կապիտալիզմին հատուկ ճկունության, բարիքների կուտակման նոր ռեժիմների արդյունք¹⁷: Դրա հիմքում ընկած է ժամանակից խորքային երևույթներից մեկը՝ ապատարածականացումը, որն ինչպես նշվեց, նույնիսկ չի ենթադրում մարդկանց փաստացի տեղաշարժ, բայց փոխում է վերածնաձևվորում է խմբերի և անհատների ինքնությունը¹⁸:

Որն է անդրազգային սոցիալական ակտիվությունների, մասնավորապես միգրացիայի շարունակական գոյության, առաջխաղացման գրավականը և ինչ տեղ ունի այն ընդունող և առաքող հասարակությունների, պետությունների համար: Մի շարք հեղինակների կարծիքով անդրազգային միգրացիոն ցանցերի ձևավորման և հետագա աստիճանաբար ծավալվող գործառնմանը նպաստեց տեխնոլոգիական աննախադեպ զարգացումը: Կապի մատչելի միջոցները, արագ տրանսպորտը, ինտերնետը ու հեռահաղորդակցության այլ ձևերը կարևոր նշանակություն ունեցան նման զարգացումների համար, հնարավորություն տալով անդր-միգրանտին վերարտադրել իր մասնակցությունն ու պատկանելությունը միանգամից երկու և նույնիսկ ավել երկրների: Այստեղ ակնհայտ է տեխնոլոգիական վուլգար դետերմինիզմը, ըստ որի կարծես միայն հեռահաղորդակցության, տրանսպորտային տեխնոլոգիաների ի հայտ գալը և տարածումը ինքնին բերում է որակապես նոր հասարակական երևույթի, որն իր հերթին գալիս է փոխելու ողջ ծանոթ աշխարհը: Այլ հեղինակներ նման

¹⁶ P. Levitt, *Transnational Migration: Taking Stock and Future Directions*, Global Networks, 2001, Volume 1, Issue 3, pp. 196-204

¹⁷ N. Nyber Sorensen, *Notes on transnationalism to the panel of devil's advocates: transnational migration – useful approach or trendy rubbish?* Paper presented at the Conference on Transnational Migration: Comparative Theory and Research Perspectives, ESRC Transnational Communities Progyazram, Oxford, UK, June, 2000.

¹⁸ A. Ong, D. Nonini (eds.), *Ungrounded empires: the cultural politics of modern Chinese transnationalism*, New York: Routledge Press 1997, pp. 3–33.

պարզեցումները դնում են կասկածի տակ, պնդելով, որ տեխնոլոգիական նորարարությունները իրենց հերթին օրինաչափ արդյունք են առավել խորքային տնտեսական, սոցիալական, քաղաքական գործընթացների¹⁹: Իրականում բազմաթիվ միգրանտներին դրդում է բնակվել կապիտալիզմի վերարտադրման առաջնային կենտրոններում՝ արդի մեգապոլիսներում, բայց ապրել "անդրազգային կյանքով" կապիտալի կուտակման նորագույն, ճկուն ձևերը, դրանցով պայմանավորված գործընթացները, այլափոխումները: Մյուս հանգամանքը, ինչքան էլ դա տարօրինակ չէ, դեռևս գոյություն ունեցող, նույնիսկ առավել խորացող խտրական վերաբերմունքն է՝ ներքին, "անմարմին" սահմաններն ու պատնեշներն են միգրանտների առջև: Փաստ է, որ այսօր, առավել քան երբևէ աչքի է ընկնում բազմաթիվ իմիգրացիոն քաղաքների մշակութային բազմազանությունը: Մեգապոլիսների փողոցներում կարելի է հանդիպել մշակութային ձևեր, սոցիալական հարաբերություններ, որոնք ընդամենը մի քանի տասնամյակ առաջ ընդհանրապես տեղի չունեին, չնայած այն բանին, որ միգրացիան ինքնին նոր երևույթ չէ²⁰: Թվում է թե, նման բազմազանությունում, երբ ձևավորված իրավիճակն տրամաբանորեն պահանջում է թե ներքին և թե արտաքին սահմանների ազատացում և թափանցելիություն, նորեկներն ընդունող հասարակություններում պետք է որ գերծ մասն ինտեգրատիվ հակասություններից: Ցավոք, այսօր շարունակաբար տեղի ունի հակառակը: Միգրացիոն հոսքերի ինտենսիվ աճը, միգրանտների բազմազանությունն ավանդական և նոր ձևավորված ընդունող հասարակություններում, պետությունների գլոբալ փոխկապակցվածությունը զուգահեռվում է ուժգնացող արտաքին սահմաններով և ներքին պատնեշներով: Արդյունքում անցավ ասիմիլյացիայի, ինտեգրացիայի անհնարիանությունը, միգրանտների բազմաթիվ խմբերի մարզինալիզացիան, սոցիալական օտարումն ու մոբիլության հետագա ստազնացիան բերում են բազմաթիվ խնդիրների, կոնֆլիկտների: Այս առումով իմիգրանտների խոցելիության արդյունքները այսօր նկարագրվում են Ուլիսեսի համախտանիշ նորաստեղծ եզրությամբ²¹: Այսպիսով, չունենալով իրավիճակի բարելավման ֆորմալ մեխանիզմներ, իմիգրանտները ձևավորում են ուրույն կենսական ռազմավարություններ, որոնցում առաջնային տեղ են զբաղեցնում անդրազգային սոցիալական ցանցերը, պրակտիկաները և դրանց տրամաբա-

¹⁹ F. Webster, *Theories of the Information Society*, Routledge, 2006.

²⁰ S. Sassen, *The Global City: New York, London, Tokyo*, Princeton University Press, 2001.

²¹ A. L. Diaz-Cuellar, H. A. Ringe, D. A. Schoeller-Diaz, *The Ulysses Syndrome: Migrants with Chronic and Multiple Stress Symptoms And the Role of Indigenous Linguistically and Culturally Competent Community Health Workers*, [online] 2013. (<http://www.panelserver.net/laredatenea/documentos/alba.pdf>, accessed 9 August 2016).

նական դրսևորումներ՝ անդրազգային համայնքները²²: Համայնքների տեղական գործունեությունը, հայրենիքի հետ ընդհանրական կապերը, ինչպես նաև առանձին միգրանտների համայնքով չմիջնորդավորված կայուն հարաբերությունները հայրենիքում գտնվող հարազատների հետ ձևավորում է փոխօգնության, խնդիրների հաղթահարմանը նպաստող հարաբերություններ, որոնք շատ դեպքերում նվազեցնում են նորեկների շուկր, ծագած խնդիրների բացասական ընթացքը: Պետք է հավելել, որ ձևավորված անդրազգային անդամակցությունը, պրակտիկաները, կապերը հայրենիքի հետ, այսօրիսակ ներհամայնքային ակտիվությունները, կարող են բերել ընդունող հասարակությունում իմիգրանտի ինտեգրացիոն պոտենցիալի անկման, կասկածի տակ դնելով ինտեգրացիոն, ասսիմիլյացիոն մարտավարությունները և ռազմավարությունները, ֆորմալ քաղաքականությունները: Հազարավոր իմիգրանտներ, նաև ի պատասխան ինտեգրացիոն բարդությունների և խոչընդոտների, տարիներ շարունակ ապրում, հաճախ բավականին ակտիվ գործունեություն են ծավալում ընդունող հասարակությունում առաջին հերթին ինտեգրալ մասը լինելով անդրազգային սոցիալական տարածության և դրանով իսկ իր հեռու գտնվող հայրենիքի:

Դա պահանջում է սփյուռք հասկացության վերանայում, որն ներկայանում է որպես հայրենիքը բռնության արդյունքում լքած մարդկած խումբ²³: Հայկական սփյուռքի համայնքները, որոնք գլխավորապես ձևավորվեցին 1915թ.-ի եղեռնի արդյունքում առանձնանում էին համախմբվածությամբ, միասնականությամբ՝ առաջնային նպատակ տեսնելով հայապահպանությունը Հայաստանից դուրս²⁴: Աստիճանական անդամակցումը ընդունող հասարակություններին թուլացրեց կապերը Հայաստանի Հանրապետության հետ: Պահպանվում էին գլխավորապես սիմվոլիկ-եմոցիոնալ կապերը, որոնց գործառնականությունը առաջ էր գալիս հատկապես օրհասական պահերին: Նման պայմաներում պատկանելության զգացմունքը, անդամակցումը բազմակի էր. ա) հայկական ընդհանրական սփյուռքի անդամ, բ) տվյալ երկրի հայկական համայնքի անդամ գ) ընդունող պետության հպատակ, հասարակության լիիրավ անդամ:

Նոր համայնքները, որոնք հիմնականում սկսեցին ձևավորվել հետխորհրդային շրջանում տարբերվում էին թե աշխարհագրությամբ և թե

²² B. Riccio, From «ethnic group» to «transnational community». Senegalese migrants' ambivalent experiences and multiple trajectories, *Journal of Ethnic and Migration Studies*, 2001, Vol. 27, No. 4: 583-599.

²³ K. Tololyan, 1996 'Rethinking diaspora(s): stateless power in the transnational moment', *Diaspora*, No 5, pp. 3-36.

²⁴ Հայ սփյուռք հանրագիտարան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, Երևան, 2003թ.

ընույթով: Առաջին հերթին հայապահպանության խնդիրն հայրենիքից հեռու առաջնահերթը չէր: Հասարակական պատասխանատվությունը նեղ էր և համայնքը հանդես էր գալիս որպես օգնող օղակ տնտեսական գործունեություն ծավալելիս: Բացի այդ, ի տարբերություն նախորդի, ակնհայտ են կայուն, պարբերական կապերը հայրենիքի հետ, ինչը բերում է կրկնակի, անդրազգային պատկանելության, անդամակցության: Առաջ է գալիս ինքնության ”և այստեղ և այնտեղ” միևնույն ժամանակ ”ոչ այստեղ ոչ այնտեղ” տրամաբանությունը²⁵: Փաստորեն ժամանակակից հայկական սփյուռքը ավանդական՝ ”հետցեղասպանական” համայնքերի, անդրազգային ինտենսիվ կապերով ցանցերի, հայրենիքի հետ կապերն ակտիվ կամ պասիվ վերարտադրող արտասահմանաբնակ առանձին հայերի համախումբ է: Անդրազգային տարածության վերարտադրման և շարունակական համալրման ”մեխանիզմները” առկա են նաև առաքման վայրում: Այսպես, Էմիգրացիան մեկ անգամ սկսվելով, երբեմն հակված է շարունակականության, նույնիսկ եթե ի սկզբանե այն պայմանավորող գործոնները թուլացել են կամ այլևս չկան: Կուտակային պատճառականության հայեցակարգը, ”միգրանտի համախտանիշ” երևույթները խոսում են այն մասին, որ Էմիգրացիոն առաջնային արարը բերում է առաքող հասարակությունում սոցիալ-տնտեսական, մշակութային և նույնիսկ քաղաքական համատեքստի այնպիսի փոփոխությունների, որ հետագա միգրացիան առավել նախընտրելի, ավելին՝ նպատակահարմար են դառնում²⁶: Դրամական փոխանցումների շնորհիվ միգրանտ ունեցող ընտանիքները հայտնվում են առավել շահեկան դրուռության մեջ: Հայրենիք պարբերաբար այցելող, կամ որոշ ընդմիջումից հետո վերադարձող հաջողակ միգրանտները առաջ են բերում սպառողական նոր շրջանակներ, նոր ճաշակ՝ առաջացնելով լրացուցիչ հակվածություն դեպի միգրացիան: Սրան նպաստում է նաև արդեն գործող, հիմնականում բարեկամներից և ընկերներից կազմավորված սոցիալական ցանցը, որն առավել կանխատեսելի և պակաս ռիսկային է դարձնում հետագա միգրացիան:

Անդրազգային ցանցերի և համապատասխան տարածությունների շարունակականությանը նպաստում են նաև վերջինիս տնտեսական ինչպես նաև քաղաքական անհրաժեշտությունը: Այսպես ընտանիքներին

²⁵ Ա. Վարտիկյան, Հայկական հետցեղասպանական սփյուռքի առանձնահատկությունները, Ցեղասպանությունը հասարակական գիտությունների կիզակետում, Հոդվածների ժողովածու, ԵՊՀ, Երևան 2015, էջեր 94-108

²⁶ D. S. Massey, L. Goldring, J. Durand, Continuities in Transnational Migration: An Analysis of Nineteen Mexican Communities, American Journal of Sociology, 1994, Volume 99, Issue 6, May, 1492-1533.; J. S. Reichert, 1981, The Migrant Syndrome: Seasonal US. Wage Labor and Rural Development in Central Mexico, Human Organization, Vol. 40, No. 1, pp. 56-66.

միտված դրամական անհատական փոխանցումները համալրվում են պետական և համայնքային մաստաբների ներդրումներով, ֆինանսատնտեսական աջակցություններով: Բազմաթիվ հաջողակ էմիգրանտներ վերակառուցում են համայնքային, գյուղական ենթակառուցվածքները, կառուցում դպրոցներ, մանկապարտեզներ, եկեղեցիներ և այլն: Սա վկայում է պատկանելության ինտենսիվ զգացմունք և համայնքին, գյուղին, "նախկին" բնակավայրին հավատարիմ լինելու մասին: Ասվածը հաստատվում է նաև ներդրումների ակտիվ վիզուալիզացիայով, ինչը պետք է հասարակական ստատուսը հայրենիքում վերարտադրելու կամ բարձրացնելու համար: Սրանով իսկ ակտիվ է ազգակառուցման, պետության գործառնման նոր, անդրազգային մոդելը: Ասվածը հիմանվորվում է անդրազգային քաղաքական ակտիվությունները նույնպես, որոնք կարևոր են այնքանով, որ Հայաստանի սահմաններից դուրս բնակվող հայերի թիվը գերազանցում է ներսում ապրողների թիվը և այս քաղաքական ինչպես նաև էլեկտորալ ռեսուրսը պարբերաբար կիրառականության կարիք ունի:

Ամփոփելով կարող ենք ասել, որ շարունակաբար ինտենսիվացող միգրացիոն հոսքերն ու շրջապտույտները, ավանդական սահմանների վերաիմաստավորման նախապայմաններն ու հնարավորությունները առաջ են բերում սկզբունքորեն նոր՝ անդրազգային սոցիալական տարածություններ, համապատասխան սոցիալական հարաբերություններ և պրակտիկաներ, որոնց խորքային, տրամաբանական անհրաժեշտությունն ընկած է թե՛ առաքող, թե՛ ընդունել հասրակությունների ներքին զարգացումներում և թե՛ ներկայիս գլոբալ, գործընթացների համատեքստում: Ակնհայտ է միգրացիոն ուսումնասիրությունների նախկին մոտեցումների վերանայման, նորարական կեմպլեքս նորամուծությունների անհրաժեշտությունը:

Արամ ՎԱՐՏԻԿՅԱՆ

Արդի միգրացիոն գործընթացներն ու հայկական անդրազգային սոցիալական տարածությունների ձևավորման և գործառնման առանձնահատկությունները

Բանալի բառեր. միջազգային միգրացիա, անդրազգային տարածություններ, անդրազգային ցանցեր, անդր-միգրանտ

Արդի, ծայրահեղ ինտենսիվ, բարդ և բազմուղված միգրացիոն գործընթացներն տեղի ունեն երկրների և պետությունների սուվերեն սահմանների թափանցելիության բարձրացման պարագայում: Արդյունքում ձևավորվող անդրսահմանային տարածությունները ենթադրում են սոցիալական տարածակարգակ սուբյեկտների միաժամանակյան լինելիություն աշխարհագրորեն զատված սոցիալական ինստանցիաներում:

Aram VARTIKYAN

Modern migratory processes and the peculiarities of Armenian transnational spaces' formation and functioning

Key words: international migration, transnational spaces, transnational networks, trans-migrant

Modern intensive, complex and multidirectional migratory processes take place in the context of in highly transparent sovereign borders of separate states and countries. As a result we have new established transnational social spaces, where simultaneous existence of multilevel social subjects in separate geogtaphical areas is obvious. Qualitatively new social contexts and relations appear.

Арам ВАРТИКЯН

Современные миграционные процессы и особенности возникновения и функционирования армянских транснациональных территории

Ключевые слова: международная миграция, транснациональные территории, транснациональные сети, транс-мигрант

Современные интенсивные, сложные миграционные процессы происходят в условия повышения прозрачности территориальных границ. Возникающие в последствии транснациональные территории предполагают одновременное существование социальных субъектов в географически различных социальных инстанциях.